



ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՄԻ ԱՐԺԵՔԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հայկական գաղթօջախների պատմությունը հարստացավ արժեքավոր մի մեծագրությամբ: 1986 թվականի վերջին Հայաստանի գիտությունների ակադեմիայի հրատարակչությունը գիտնականների և ընթերցասեր լայն հասարակայնության սեղանին դրեց պատմական գիտությունների թեկնածու Հ. Խ. Թովուզյանի «Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմությունը 1841—1946 թթ.» աշխատությունը:

Գրախոսվող հրատարակությունը, որն ընդգրկում է հարյուրամյա պատմական մի ժամանակաշրջան, բաղկացած է 370 էջից: Ունի տասը գլուխներ, առաջաբան, վերջաբան, հատուկ անունների և օգտագործված աղբյուրների ցանկեր: Թեև Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմության առանձին հարցերի մասին մի շարք հետազոտողներ (Արտավազդ արքեպիսկոպոս Սուրմեյան, Արշակ Ալպոյանյան, դոկտ. Ավետիս Սանջյան և ուրիշներ) հայերեն և օտար լեզուներով բավականին բան գրել են, այնուամենայնիվ, առանց ժխտելու այդ գաղթօջախների վերաբերյալ լույս տեսած բազմաթիվ փաստաթղթերի և հոդվածների, ինչպես նաև առանձին հարցերի մասին մինչև այսօր եղած հրատարակությունների արժեքը, կարելի է անվարան ասել, որ հարգարժան Հ. Թովուզյանը, օգտվելով իր բազմամյա գիտական փորձից և օտար լեզուների լիարժեք իմացությունից, կարողացել է գիտնականի բարեխղճությամբ պեղել հայրենական և օտար աղբյուրներն ու արխիվները, աչքի անցկացնել այդ մասին մինչև այսօր հրատարակված ամբողջ պատմա-

կան նյութը և ապա համակարգյալ կերպով շարադրել և ամբողջացնել Սիրիայի և Լիբանանի գաղթօջախների պատմությունը: Վերոհիշյալ գաղթօջախների մասին լիարժեք և ամբողջական հրատարակություն մեզանում փաստորեն առաջին անգամ է ձեռնարկվում:

Գիրքը բաժանված է երկու մասի: Առաջին բաժինը նվիրված է Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների նոր պատմությանը (1841—1918 թթ.): Նշված պատմական ժամանակահատվածում Սիրիան նույնպես տառապում էր օսմանյան գերիշխանության տակ: Սիրիահայությունը այդ շրջանում հավասարապես բաժանում էր արաբ բնակչության կրած տառապանքները, ստորացումը, կեղեքումը, նրա վրա գործադրված կամայականությունները, ցեղասպանությունը և բոլոր այն վայրագությունները, որոնց ընդունակ էին օսմանյան կայսրության պաշտոնյաները: Հեղինակը կարողացել է ոչ միայն հիշյալ գաղթօջախների սոսկական պատմությունը շարադրել, այլ նաև, որ նույնքան արժեքավոր, գիտական և կարևոր է, մեր ժողովրդի այդ հատվածի պատմության հետ միաձուլված ընթերցողին ներկայացնել պատկան երկրների ժողովուրդների պատմությունը: Գրքում լայնորեն լուսաբանվել են հայկական համայնքների իրավական գոյավիճակը, սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի հետ առնչվող բոլոր հարցերը: Անտարալույս գրախոսվող աշխատությունը կրկնակի արժեք է ստացել այն իմաստով, որ նրանում հայ գաղութների պատմությանը զուգահեռ հանգամանորեն քննվել և գիտական լուծում են ստացել հայ-արաբական

հարաբերությունները: Հեղինակը, ծանոթ լինելով հայ գաղթօջախների պատմության մանրամասնություններին, կարողացել է գիտական խորաթափանցությամբ վեր հանել մաս Սիրիայի և Լիբանանի հայության բերած նպաստը հայ ազատագրական շարժումներին՝ համապատասխան պատմական ժամանակահատվածում: Դրա ամենացայտուն օրինակն է հանդիսանում Մուսա լեռան հերոսամարտը:

Գրքում լայն տեղ է հատկացված մաս Սիրիայի և Լիբանանի հայության հայրենադարձությանը, ինչպես մաս Սովետական Հայաստանի նկատմամբ նրա ցուցաբերած վերաբերմունքի հարցերին: Հեղինակը պատմական հարուստ փաստերի հիման վրա հաստատում է, որ հայ-սիրիական կապերը շատ հին են եղել:

Հռոմեական աղբյուրների ավանդած տեղեկությունների համաձայն, մեր թվագրության առաջին դարի կեսերին արդեն Խառունից ոչ հեռու, Սիրիայի դաշտային և լեռնային վայրերում, եղել են բազմաթիվ հայկական գյուղեր, որոնք գոյատևել են մինչև մեր օրերը, ինչպես, օրինակ, Սելևկիայի (Սվեդիայի) և Կասիոսի (Քեսապի) հայկական բնակավայրերը: Գրքի ընթերցումից իմանում ենք, որ ԺԱ.—ԺԳ. դարերում Սիրիայի ազգաբնակչության մի զգալի մասը բաղկացած է եղել հայերից: Դժբախտաբար ԺԱ. դարում թուրք-սելջուկյան (1064—1220 թթ.) և ԺԳ. դարում մոնղոլ-թաթարական (1220—1468 թթ.) չորսհարյուրամյա տիրապետությունը և դաժան ճնշումները Հայաստանում ստիպում են հայ ժողովրդին զանգվածորեն հեռանալու Հայրենիքից: Նրանց մի մասը հանգրվանում է Սիրիայում և Միջագետքում:

ԺԹ. դարի 40-ական թվականներից հետո, երբ Սիրիան ներքաշվում է եվրոպական երկրների ոլորտը՝ դառնալով կիսագաղութ, մի տեսակ կոլախնձոր է դառնում Անգլիայի, Ֆրանսիայի և Գերմանիայի միջև: Գերմանիային գաղութատիրական այդ հարցերից հեռու պահելու նպատակով Անգլիան անմիջապես տիրում է Միջագետքին և Պաղեստինին, իսկ Սիրիան և Լեռնային Լիբանանը դառնում են ֆրանսիական ազդեցության ենթակա երկրներ: Այս շրջանում (1870—1890 թթ.) Սիրիայում ապրելիս են եղել 80—85 հազար հայեր: Հեղինակին հաջողվել է համոզիչ փաստերով ապացուցել, որ Սիրիայում բնակվող հայության պաշտոնական թիվը սխալ է ներկայացված: Իրականում հայերը հարկատվությունից խուսափելու նպատակով ընտանիքի անդամների թիվը, պատ-

մական այդ ժամանակահատվածում, պակաս էին ներկայացնում իշխանություններին: Մեծագրության հեղինակը, հիմնվելով պատմական փաստերի և ժամանակակիցների վկայությունների վրա, կարողացել է հագեցված ձևով ներկայացնել մաս Սուլթան Համիդ Բ-ի (1876—1909 թթ.) կառավարման արյունոտ շրջանի համակողմանի պատկերը: Սուլթան Համիդ Բ-ն 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, հայերին պատժելու նպատակով, կազմակերպել է չերքեզների, չեչենների, քրդերի հոսքը Արևմտյան Հայաստան, որտեղից նրանք անարգել անցել են Սիրիայի՝ հայերով խիտ բնակեցված շրջանները: Այնուհետև սկսվել են կրոնական ճնշումները, բռնությունները և բերրի հողերի բռնագրավումը սիրիահայերից: Հեղինակը գիտական հմտությամբ վեր հանելով թուրքական կառավարության ներսում գոյություն ունեցող քննաքնն ու շողոքոթությունը, ցույց է տվել, թե ինչպես օսմանյան կառավարության կողմից հրահրված ազգամիջյան թշնամանքի հետևանքով, մինչև այդ բարիորացիական հարաբերություններով ապրող հայերն ու քրդերը դարձել են միմյանց նկատմամբ անհաշտատելությամբ լցված ռիստիմ թշնամիներ: Սուլթան Համիդ Բ-ի կառավարման 33 տարիների (1876—1909 թթ.) ընթացքում թափվել է մեր անմեղ ժողովրդի արյունը: Միայն 1890-ական թվականներին Դիարբեքիի շրջանում հրդեհվել են 119 հայկական գյուղեր՝ խլելով 6000 անմեղ հայորդիների կյանքը: Սույն վայրագությունները թուրքերի կողմից կատարվել են Հայեայի մահաձուլում, Ուրֆայում, Ադանայում և այլուր:

Գրքում տխուր և արյունոտ փաստերից բացի, բերված են մաս արիության և հերոսության բազում սքանչելի օրինակներ, որոնք հաստատում են, որ մեր ժողովրդի զավակները անմեղ գառուն մման չեն մորթվել միայն: Հիշենք թեկուզ Մուսա լեռան, Չորք-Մարգվանի, Քեսապի և այլ վայրերի հերոսական դիմադրությունները, որոնք, անտարակույս, նպաստեցին այդ գաղթօջախների գոյատևմանը: «Չորք-Մարգվանի, Քեսապի և այլ վայրերի հայերի հերոսական դիմադրությունը և արաբների հայանպաստ դիրքավորումը զգալիորեն նպաստեցին նրանց (գաղթօջախներին) գոյության պահպանմանը» (Էջ 106):

1914 թվականի հունիսի 14-ին սկսվում է առաջին համաշխարհային պատերազմը: Օգտվելով հարմար առիթից՝ Արևմտյան Հայաստանում կազմակերպվում և իրակա-

նացվում է հայ ժողովրդի ցեղասպանությունը: Սուրբան Համիդի հարազատ զավակները հանդիսացող երիտթուրքերը, օգտագործելով միջնադարյան վանդալիզմի ձևերն ու մեթոդները, կազմակերպում են համատարած կոտորածներ՝ նպատակ ունենալով վերջնականապես ոչնչացնել մեր հնամենի ու խաղաղասեր ժողովրդին: Այն, ինչ կատարվում էր բուն Հայաստանում, երիտթուրքերը ծրագրել էին իրականացնել նաև գաղութահայության նկատմամբ: 1915 թվականի սկզբներին արդեն ստացվել էին Հալեպի և Բեյրութի նահանգներում ապրող հայության աքսորման և ոչնչացման հրամանը: Ծիշտ է, Բեյրութում և Հալեպում Ջեմալ Բեյի բարյացակամության շնորհիվ հայերը չտեղահանվեցին և չկոտորվեցին, սակայն ջարդեր և տեղահանություններ եղան Դեռթ-Յոլում, Այնթապում, Ադանայում, Սվազում, Մալաթիայում, Քիլիսում, Քեսապում և այլ վայրերում: 1915 թվականի մայիսին, տառապանքի և մահվան բռնիքից անցած 35000 տեղահանված հայեր կենտրոնացվել են Հալեպ քաղաքում, ապա բռնիքով անապատ՝ տաք ավազների վրա իրենց դանդաղ մահը գտնելու: 1915 թվականի վերջերին, երբ փաստորեն ավարտված էր արևմտահայության ելիցը իր հարազատ բնօրրանից, շուրջ 500000 կիսակենդան հայեր ապաստան էին գտել Հալեպի, Դամասկոսի և Եփրատ գետի միջև ընկած երկրամասում: Ահա այս ամենը փաստացի և ճշգրիտ տվյալներով հեղինակ Արեկայացրել է ընթերցողներին:

Գրքում խոսվում է նաև Արևելյան կամ Հայկական լեգեոնի մասին: Հեղինակի ուսումնասիրությունները այդ ուղղությամբ նրան բերել են ճիշտ եզրահանգման: Լեգեոնի կազմակերպումը փաստորեն անգլո-ֆրանսիական պատերազմական շրջանի դիվանագիտության արգասիք է եղել: Նրա գոյությունը թելադրված է եղել ֆրանսիացիների նյութական և հրամանատարության սպահովման անհրաժեշտությամբ: Լեգեոնը չի ունեցել ծրագիր և երկկողմանի պայմանագիր: Այն հիմնված է եղել «ֆրանսիացի «ասպետական» ազնիվ խոսքի և հայ դիվանագետների» Ֆրանսիայի նկատմամբ ունեցած կույր հավատքի վրա» (էջ 135):

Գրքում լայն տեղ է տրված Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների մշակութային կյանքին: Դեռևս 1821 թվականին Հալեպում և Դամասկոսում գոյություն են ունեցել հայկական դպրոցներ, որոնց թիվը 1905 թվականին հասել էր 12-ի՝ 1100 աշակերտներով: Ներկայացված երկու գաղթ-

օջախներում էլ եղել են Տիկմանց, Դարոցասեր Տիկմանց, Հայ Բարեգործական Ընդհանուր Միության մասնաճյուղեր և այլ ազգաշեն հասարակական կազմակերպություններ: Հայերը իրենց նպատակն են քերել նաև արաբական մշակույթին՝ բժշկագիտության, գյուղատնտեսության, դիվանագիտության, քաղաքաշինության և այլ ասպարեզներում:

Գրքում լայնորեն ներկայացված է հայ կուսակցությունների գործունեությունը տրվյալ պատմական ժամանակահատվածում: Մեծ եղեռնից ազատված և Սիրիայում ու Լիբանանում հաստատված հայ ժողովրդի մնացորդացը 1924 թվականից սկսած դարձել է հայ կուսակցությունների՝ Հնչակյանների, Ռամկավարների և Դաշնակցականների քարոզության նպատակակետը: Այդ շրջանում հայ կուսակցությունների գլխավոր խնդիրն է եղել իրենց դիրքը ճշտել հատկապես իրականություն դարձած Խորհրդային Հայաստանի նկատմամբ, որը Ամենայն Հայոց Հայրենիքն է: Հնչակյանները և Ռամկավարները առաջին օրից կանգնել են Հայրենիքի կողքին՝ ոգևորելով գաղութահայությանը Հայրենիքի ամենափոքր նվաճումներով անգամ: Իսկ Դաշնակցական կուսակցությունը, չկարողանալով ճիշտ կողմնորոշվել և գնահատել իրականությունը, հենց 1924 թվականից թշնամական դիրք է որդեգրել Հայրենիքի նկատմամբ: Այսպիսով գաղութահայ իրականության մեջ ստեղծվել են երկու հակադիր ճակատներ, որոնց սահմանազատման հիմնական առանցքը կազմել է Դաշնակցության դիրքը սովետական հայրենիքի հանդեպ: Դաշնակցական կուսակցությունը, անհայրենիք պետություն ստեղծելու ցնորքով տարված, հաջողել է բռնությամբ, խաբեությամբ, տեղորոշվել և ստոր միջոցներով սեփականացնել Սիրիայի և Լիբանանի պառլամենտներում դեպուտատ ունենալու իրավունքը: Ավելի ուշ, բռնաճարձով Մեծի Տանն Կիլիկիո 80-ամյա ծերունագարդ Սահակ Խապայան կաթողիկոսի վրա, 1950-ական թվականներից կարողացել է մուտք գործել այդ Աթոռից ներս: Հետագայում դրության տեղը դառնալով Անթիլիասում, այդ Աթոռի միաբանության մի փոքր մասին մոլորեցնելով, գործիք է դարձրել իր ձեռքում և աչսօր փորձում է քայքայել Հայ Սփյուռքի միասնությունը՝ աշխատելով հայ ժողովրդի տարաափյուռ զավակներին հեռացնել իրենց Հայրենիքից և Ս. Էջմիածնից:

Գրքի վերջին գլխում հեղինակը հրապարակել է՝ աղյուսակներ, որոնք ստույգ

տեղեկություններ են տալիս Սիրիայի և Լիբանանի գաղթօջախների մշակութային աշխույժ կյանքի մասին, 1918—1946 թվականներին: Այդ աղյուսակներից ընթերցողը ամենայն ճշգրտությամբ կկարողանա իմանալ, թե այդ թվականներին Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախներում բնակվող Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական համայնքներից յուրաքանչյուրը որքան դպրոցներ և մանկապարտեզներ է ունեցել, և նրանցում որքան երեխաներ են սովորել:

Ինքնընտանիքային հասկանալի է, որ նը-

ման ճշգրիտ և մանրամասն տեղեկությունները ինչպիսի կարևորություն են ներկայացնում և մեծապես բարձրացնում պատմական որևէ ուսումնասիրության գիտական արժեքը:

Վերջացնելուց առաջ կցանկանայինք մի անգամ ևս շեշտել հիշյալ մեմագրության կարևորությունը հայ գաղթօջախների և առհասարակ հայ պատմագրության ուսումնասիրության ասպարեզում:

ԵՂԻԾԵ ԱՎԱԳ ՔԱՀԱՆԱ ՍԱՐԳՍՅԱՆ

